

Մագիստրատուրա ընդունվող շրջանավարտների հետ «Բակալավրական և մագիստրոսական կրթությունն իմ աչքերով» թեմայով քննարկման արդյունքների ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

23.04.2016թ.

ԵՊՀ ԻՄ 2015/16 ուս տարվա այն շրջանավարտների հետ, ովքեր ունեն բարձր առաջադիմություն և նպատակադրվել են կրթությունը շարունակել մայր բուհի մագիստրատուրայում ՄԿՈԱ բաժինը կազմակերպեց քննարկում՝ «Բակալավրական և մագիստրոսական կրթությունն իմ աչքերով» թեմայով: Շրջանավարտներին ներկայացվեց այն հարցերի մոտավոր շրջանակը, որոնք պետք է դառնային քննարկման առարկա: Միաժամանակ հարցաշարն առանձին թերթի վրա բաժանվեց մասնակիցներին /հարցաշարը տես ստորև/: Շրջանավարտները լրացրեցին հարցաթերթը և յուրաքանչյուրն արտահայտեց սեփական կարծիք-գնահատականը նաև բանավոր:

Մասնակիցներին առաջադրվեցին մոտավորապես հետևյալ բովանդակության հարցեր.

1. Ընդունվելիս ի՞նչ ակնկալիքներ ունեիք Իջևանի մասնաճյուղից և որքանո՞վ արդարացան դրանք:
2. Բակալավրական կրթության շրջանակներում, ըստ Ձեզ, մասնաճյուղը կարողացա՞վ տալ բավարար գիտելիքներ ու հմտություններ՝ Ձեր մասնագիտությամբ աշխատելու համար:
3. Գնահատման գործող համակարգը, Ձեր կարծիքով, կարողացա՞վ լիարժեք բացահայտել Ձեր գիտելիքները, հմտություններն ու կարողությունները:
4. Որո՞նք են այն շարժառիթները, որոնք Ձեզ մղում են ուսումը շարունակելու մագիստրատուրայում:
5. Ընդհանրապես ի՞նչ պատկերացում ունեք մագիստրոսական կրթության, նրա նպատակների ու հնարավորությունների մասին:
6. Ցանկություն ունե՞ք հետագայում զբաղվելու ուսումնագիտական գործունեությամբ:

Ընդհանրական տեսքով հակիրճ ներկայացնենք շրջանավարտների կարծիք-գնահատականները քննարկվող հարցերի վերաբերյալ:

Բարձր առաջադիմություն ունեցող շրջանավարտները, որոնք ընթացիկ տարում կրթությունը շարունակելու են մագիստրատուրայում, միահամուռ էին այն հարցում, թե մասնաճյուղը բակալավրական կրթության շրջանակներում կարողացել է իրենց տալ բավարար գիտելիքներ և հմտություններ, ինչը թույլ կտա տվյալ մասնագիտությամբ աշխատել: Նրանց գերակշիռ մասը մասնաճյուղ է ընդունվել այն նպատակով, որ պետք է ստանա որակյալ բարձրագույն կրթություն և դառնա լավ մասնագետ, և խոստովանում են, որ իրենց ակնկալիքները լիովին արդարացել են: 3 շրջանավարտ նշեցին, որ ուսումնառության չորս տարիների ընթացքում, իհարկե, եղել են նաև որոշակի դժգոհություններ,

հիասթափություններ, սակայն դրանք հաղթահարվել են և էապես չեն անդրադարձել իրենց գնահատականի կամ ինքնագնահատականի վրա: Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ ըստ որոշ շրջանավարտների, առկա է խզում ձեռք բերված գիտելիքների ու հմտությունների միջև: 2 շրջանավարտ նշեցին, որ ձեռք բերված գիտելիքները բավարար են, իսկ հմտությունները լիարժեք չեն: Կարծիք հայտնվեց նաև այն մասին, թե շատ են եղել կրկնվող առարկաներ: Դրա պատճառը գործնական պարապմունքների և պրակտիկաների ոչ լիարժեքությունն է: Որպես օրինակ շրջանավարտներից մեկը ասաց, թե դպրոցում անցկացրած պրակտիկայի ընթացքում իրենց լիարժեք ինքնաարտահայտվելու հնարավորություն չի տրվել: Ի դեպ պրակտիկայի հետ կապված այս և մի շարք այլ հանգամանքներ տարբեր առիթներով նշել են նաև տարբեր մասնագիտությունների և կուրսերի ուսանողները՝ ՄԿՈԱ բաժնի կողմից անցկացված մյուս հարցումների ընթացքում: Դա հուշում է այն մասին, որ ուսումնական, հատկապես արտադրական պրակտիկաների արդյունավետ անցկացման հարցը պետք է դառնա նրա պատասխանատուների ուշադրության առարկա:

Դատելով շրջանավարտների գրավոր և բանավոր պատասխաններից, նրանք հիմնականում բավարար պատկերացում ունեն մագիստրոսական կրթության մասին և մոտիվացված են: Գերակշիռ մասը համոզված է, որ կրթական այդ մակարդակում ձեռք է բերելու ավելի խորը և կայուն գիտելիքներ, գիտահետազոտական որակներ, ինչը մեծացնում է ցանկալի մասնագիտությամբ ցանկալի աշխատանք գտնելու հավանականությունը, բարեկեցիկ կյանքով ապրելու հնարավորությունները: Հատկանշական է և ուրախալի, որ 20 ապագա մագիստրոսներից 11-ը ցանկություն ունեն զբաղվելու ուսումնա-գիտական գործունեությամբ, ըստ որում չթաքցրեցին իրենց մտադրությունը՝ հնարավորության դեպքում դասավանդել սիրելի մասնաճյուղում: Հուսադրող է և այն փաստը, որ ուշադրություն չեն դարձնում ասեկոսների ու չարախոսությունների վրա, կապված մագիստրոսական կրթության հետ: Իբրև թե այն ժամանակի կորուստ է, ավելորդություն է, ոչինչ չի տալիս և այլն: Ինչ խոսք, մագիստրոսական կրթության կայացման համար դեռ կան բազմաթիվ օբյեկտիվ և սուբյեկտիվ բնույթի չլուծված խնդիրներ, ինչը խոստովանում են կրթության ոլորտի կառավարման ամենաբարձր կարգի պատասխանատուները: Սակայն ճշմարտություն է և այն, որ ուսումնագիտական գործունեության համար մագիստրոսի կոչումը պարտադիր է, էլ չենք ասում ճանաչողության մեջ խորանալու անհատի ցանկությունը, որի իրականացման ամենակարճ ճանապարհներից մեկը հենց մագիստրոսական կրթությունն է: «Ես սիրում եմ իմ մասնագիտությունը, ցանկանում եմ ավելի զարգացնել գիտելիքներս ու հմտություններս, իմ մասնագիտությամբ լավ աշխատանք գտնել, մրցունակ դառնալ աշխատաշուկայի համար, ինքնուրույն լիարժեք կյանքով ապրել, ինչի համար համոզված եմ, որ մագիստրոսական կրթությունը անհրաժեշտ պայմաններից մեկն է»: Հիմնականում նման բնույթի էին շրջանավարտների պատասխանների մեծ մասը:

Առանձին ուշադրության արժանի է գնահատման համակարգի վերաբերյալ շրջանավարտների անկեղծ պատասխանները: Նկատելի էր, որ ճշգրիտ գիտությունների

ներկայացուցիչներն ավելի գոհ էին գործող գնահատման համակարգից, քան հումանիտար մասնագիտություններինը: Վերջիններից շատերը հավաստում էին, որ թեստային գնահատման եղանակը լիարժեքորեն չի բացահայտում ուսանողների գիտելիքները, այն դնում է սահմանների մեջ: Նույնիսկ կարծիք եղավ այն մասին, թե թեստերը ավելի են ուսանողին բթացնում: Ասվում էր, որ ազատ շարադրանքն ավելի մեծ հնարավորություն է տալիս գիտելիքները դրսևորելու: Կան առարկաներ, որոնք բանավոր հանձնելու դեպքում դասախոսը կարող է ավելի խորանալ ուսանողների իմացության աստիճանի, մտածողության մշակույթի մեջ: Այլապես, միայն կետ-խաչ դնելով հազիվ թե հնարավոր լինի իրապես իմանալ տվյալ ուսանողի ըմբռնողության աստիճանը: Այսպիսին էր ուսանող-շրջանավարտների հիմնավորումները, կապված գնահատման գործող համակարգի վերաբերյալ կարծիքների հետ: Պարզ է մի բան. եթե կանոնակարգը թույլ է տալիս, կարելի է ավելի ճկուն վերաբերվել գնահատման համակարգին, տարբերակված մոտեցում ցուցաբերել գնահատման մեթոդի ընտրության հարցում: Այն առարկաները, որոնցում ավելի է կարևորվում ուսանողի հնարամտությունը, ավելի մեծ են գիտելիքին ստեղծագործաբար վերաբերվելու հնարավորությունները, թեստային համակարգը կարող է պակաս արդյունավետ լինել: Ավելի ճիշտ է այստեղ օգտագործել բանավոր ստուգման մեթոդը:

Ամփոփելով կարող ենք ասել հետևյալը.

- ԵՊՀ ԻՄ այն շրջանավարտները, որոնք մտադիր են ուսումը շարունակել մագիստրատուրայում, հիմնականում գոհունակություն հայտնեցին մասնաճյուղից ստացած կրթությունից, հավաստելով, որ իրենց ստացած գիտելիքներն ու հմտությունները թույլ են տալիս աշխատելու իրենց մասնագիտությամբ:

- Քննարկման մասնակիցների գերակշիռ մասն ունի համարժեք պատկերացումներ մագիստրատուրայի հնարավորությունների մասին և մոտիվացված է կրթական այդ համակարգի օգնությամբ լիարժեքորեն տիրապետել սիրելի մասնագիտությանը և մրցունակ դառնալ ժամանակակից աշխատաշուկայում: Ըստ որում երկուսից մեկը մտադրություն հայտնեց հետագայում զբաղվելու ուսումնա-գիտական գործունեությամբ, ինչը նրանց դարձնում է մասնաճյուղի կադրային ռեզերվ:

- Միաժամանակ առանձին մասնագիտությունների ներկայացուցիչները մտահոգություն հայտնեցին արտադրական պրակտիկայի և գնահատման գործող համակարգի արդյունավետության մասին:

Քանի որ ՄԿՈԱ բաժինը նախատեսում է ուսումնական տարվա ավարտին մասնաճյուղի շրջանավարտների համատարած հարցում, կարծում ենք նրա արդյունքները համադրելով վերոնշյալ քննարկման արդյունքների հետ կարող ենք ունենալ հիմնավոր առաջարկներ:

Մասնագիտական կրթության որակի ասպահովման բաժին